

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվանում

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Աշխատանքի վայր

ք. Երևան

Աշխատանքի տեսակը, աշխատաժամանակը

Հիմնական, լրիվ աշխատաժամանակ

Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն

«Վեոյիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:

Աշխատանքի նկարագիր

- Արտադրատեխնիկական բաժին Տարածքային Տնօրինությունների կողմից մուտքագրված տեխնիկական պայմանների առաջարկների խոշորացված նախահաշիվների կազմում, դրանց լուծումների տեղում ստուգում, վերանայում և համակարգում;
- Պարտադիր Կապիտալ Աշխատանքների Ծրագրով (ՊԿԱԾ) նախատեսված նախագծային կազմակերպությունների կողմից իրականացված նախագծանախահաշիվային փաստաթղթերի փաթեթների ուսումնասիրում, ստուգում, տեխնիկական առաջարկների վերանայում, քարտեզագրման բաժնից տարածքների ելակետային տվյալների ստացում և տրամադրում համապատասխան Տարածքային Տնօրինություններին;
- Միջազգային ֆինանսավորող և այլ դրամաշնորհային կազմակերպությունների միջոցներով նախատեսված ծրագրերի շրջանակում խորհրդատվական ծառայությունների կողմից ներկայացված հաշվետվությունների, առաջարկների, նախագծա-նախահաշիվային փաստաթղթերի լուծումների ուսումնասիրում, վերանայում և ստուգում:

Պահանջներ

- Համակարգչային գիտելիքներ (MS Word, Excel, AutoCad ,G Suite) ծրագրերի իմացություն;
- ՀԾԿՀ N 378-Ն խմբելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին որոշման իմացություն;
- Իր գործառույթների հետ կապված ՀՀ իրավական ակտերի իմացություն;
- Բարձրագույն կրթություն ճարտարագիտություն մասնագիտությամբ
- Թիմում աշխատելու ունակություն
- Կարգապահության և պատասխանատվության բարձր զգացում

Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները/CV hr@vjur.am էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **Տեխնիկական պայմանների նախագծերի համակարգող** կամ զանգահարել **033-144-748** հեռախոսահամարին:

Հարցազրույցին մասնակցելու համար կհրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: